

Հայաստանի հաջորդ առաջ քայլը

Հարգելի՛ մասնակիցներ,

Ես մի երկու բառով կուզենայի որոշ ցուցանիշներ ներկայացնել Հայաստանի տնտեսության ոլորտի մասին, որպեսզի ավելի լավ պատկերացնեք, թե ի՞նչ ուղի է անցնում Հայաստանի տնտեսությունը: Կուզենայի առաջին հերթին նշել, որ 2008 թվականը Հայաստանի Հանրապետությունում մեծ կշիռ ունեւ շինարարությունը:

2008թ-ից 2016թ-ը Հայաստանի GDP (Gross Domestic Product) Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) աճել է մոտավորապէս 45%-ով, սակայն շինարարության կշիռը մեր մոտ ընկել է 17 %-ով: ՀՆԱ-ի կազմում դա այսօր կազմում է միայն 8%: Ի՞նչ է եղել այդ տարիների ընթացքում և Հայաստանի տնտեսությունն ընդհանուր ՀՆԱ-ի ի՞նչ տրանսֆորմացում է ապրել: 2016թ-ի դրությամբ մենք ունեինք շատ մեծ կշիռ ծառայությունների մեջ և աճել է նաև գիտության կրթության կշիռը: Մասնավորապէս, եթե անդրադառնում ենք ծառայություններին, ապա 2016-ի դրությամբ ՀՆԱ-ի մեջ այն 28-29% է կազմում: Աճել է նաև ընդհանուր գումարը, որով զբոսաշրջությունը նպաստում է տնտեսության ՀՆԱ-ին՝ հասնելով արդեն իսկ 1.5 միլիարդ դոլարի, և մինչև 2027 թվականն ակնկալում ենք աճ մինչև 2.2 միլիարդ դոլար: Բնականաբար, այդ ամբողջը հնարավոր է եղել զբոսաշրջիկների քանակի աճով: Եթե 2016 թվականի դրությամբ մենք ունեինք 1.26 միլիոն զբոսաշրջիկ, ապա 2020-ին ակնկալում ենք շուրջ 2.6 միլիոն:

Նման աճը բնականաբար ամբիցիոզ կթվա, բայց իմ կարծիքով դա իրատեսական է: Ոլորտներից նաև կուզենայի նշել SS-ի ոլորտը, որը վերջին 5 տարվա ընթացքում մեր ՀՆԱ-ում 1.5%ից հասել է շուրջ 5%- ի և այսօրվա տվյալներով արդեն այն կազմում է 4-500 միլիոն դոլար: Որպէս թիրախտային ցուցանիշ՝ մինչև 2018-ը այն պետք է հասնի մինչև 1 միլիարդի:

Վերջում կուզենայի անդրադառնալ Հայաստանում բիզնես միջավայրին: Իմ կարծքով սա ավելի շատ կարող է հետաքրքրել մեր սփյուռքահայ բարեկամներին, որովհետև բազմիցս լսում ենք որ բիզնես միջավայրը Հայաստանում այդքան էլ լավ չէ, լինում են ինչ որ խնդիրներ: Միջավայրն իհարկէ իդիալական չէ, բայց պետք է նշել որ, եթե մենք նայենք վերջին տարիներին միջազգային ամենամեծ ճանաչում ունեցող ընկերությունների ցուցանիշները, ապա 2017 թվականի դրությամբ, տնտեսական ազատականության տվյալներով Հայաստանը բարելավել է իր տեղը 21 կետով, իսկ «Դուինգ բիզնես»- ցուցանիշներչով՝ 2017-ի դրությամբ, բարելավել է իր դիրքը 5 կետով: Տնտեսական ազատականության ցուցանիշներչով Հայաստանը զբաղեցնում է 33-րդ

տեղը, իսկ «Դուինգ բիզնես»-ի տվյալներով 38-րդ տեղը: Կարծում եմ 26 տարի պատմություն ունեցող երկրի համար ցուցանիշները բավականին լավն են:

Շնորհակալություն:

Տիգրան Գասպարյան

«Քեյ Փի Էմ Ջի Արմենիա» ՓԲԸ, ղեկավար, գործընկեր